№ 117 ՈՒՐԲԱԹ 31 ՄԱՅԻՍԻ
1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՈՒՐԲԱԹ 31 ՄԱՅԻՍԻ № 117

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՊԱՊԻՐՈՍՆԵՐ ԳԱԼԼԷԱ „ԿՈՄԷՏԱ" ԸՆԿ.
— ԹԻՖԼԻՍՈՒՄ: —
25 հատը —15 կոպ., 10 հատը —6 կոպ.
(և. ու.) 986. 0—44

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։
Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Ко, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Փարիզում՝ 8 Площадь Биржи.
1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» և հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ
ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐԻ
Բաց է Զմերային ժողովարանում առ. ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը։
առ. 441. 5—3

ԿՈՃՈՐ
ՄԱՆԿԱԿԱՆ ԿԼՈՒԲ Ֆլօրա Վարդանեանի
Ընդունվում են նաև ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐ պարապելով և ամարային հանգստութեան համար։ Պայմանների մասին մինչև յունիսի 1-ը կարելի է դիմել Թիֆլիս Лермонтовская ул. 21. Մանկական պարտէզ, առաւօտեան ժամը 10—2-ը և երեկ. 5—7-ը, իսկ յունիսի 1-ից յետոյ Կոջոր Մանկական Կլուբ, գրաւոր կամ անձամբ։
առ. 447. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆԸ
մեկնեց ԿԻՍԼՈՎՈԴՍԿ (հանքային ջրեր)
Հիւանդների ընդունելութիւնը՝ Կոլոսովայի հիւրանոցում («ՆԱՐԶԱՆԻ» գալլերէայի դիմաց)։
առ. 444. 3—2

ԲԺԻՇԿ
ՄԱԿԱՐԵԱՆՑԸ
Մայիսի 15-ից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը
ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
Մասնագիտաբար—միզասեռական, վեներական, սիֆիլիս և կաշւի հիւանդութիւններ։
Հասցէն՝ Верхній бульваръ, д. Зипаловой.
(օ.մ.) առ. 401. 20—5

ՇԱՐԺՎԵՑԷՔ, ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏՆԵՐ

Այն յուսահատական ճիչը, աղաղակը, որ արձակեց ռուս հրապարակախօս Օլգենինը ամսիս 27-ի երեկոյեան իր դասախօսութեան ժամանակ, ուղղված հազարաւոր հայ հասարակութեան և հայ ինտելիգենցիային, որոնք խորին լռութեան մէջ ունկնդրում էին նրան, ստիպում է մեզ ևս ձայն բարձրացնել և կոչ անել հայ դրամատէրերին ու ասել.

— Հայ հարուստներ, հայ կապիտալիստներ, կատարեցէք ձեր մարդկային, ազգային և մարդասիրական պարտքը։ Կատարեցէք, որովհետև եթէ յապաղէք կատարելու այդ պարտքը՝ մայր հայրենիքը, Հայաստանը, ուր հազարաւոր տարիներից ի վեր հանգչում են մեր նախնիքների աճիւնները, որ եղել է օրրան մեր ազգային քաղաքակրթութեան, հանդիսարան մեր պատմութեան, մեր ժողովրդի հերոսական առաքինութիւնների և քաջագործութիւնների, այդ հայրենիքը կանհետանայ։

Ռուս ճանապարհորդը վկայում է, որ միակ լուսատու աստղը Թիւրքահայաստանի համատարած խաւար հորիզոնի վրա՝ Միացեալ Ընկերութիւնն է, այն Ընկերութիւնը, որի բարգաւաճման այնքան նպաստեցին առաջ ռուսահայերը, Գր. Արծրունու կոչով, այն Ընկերութիւնը, որ այսօր դպրոցներ է բացում հեռաւոր և խուլ անկիւններում, գիւղերում, բայց չէ կարողանում լայն և ընդարձակ գործունէութիւն ցոյց տալ, որովհետև չունի անհրաժեշտ նիւթական միջոցները։

Ուրեմն անհրաժեշտ, հրամայողական պահանջ է օգնել Միացեալ Ընկերութեան, որ դեռ անցեալ տարի դիմեց ռուսահայերին, խնդրելով օգնութիւն։

Սակայն, հակառակ եղած յորդորներին և կոչերին, ռուսահայերը մինչև այժմ գլացան իրական օգնութիւն հասցնել այդ վերին աստիճանի օգտակար Ընկերութեան, այլ բաւականացան պլատոնական համակրութեամբ։

Միացեալ Ընկերութիւնը և Եգիպտոսի Հայոց Ընդհանուր Բարեգործ. Միութիւնը միակ հաստատութիւններն են, որոնք մտածում են Թիւրքահայաստանի կրթութեան մասին, որոնք դպրոցներ են բացում, հետևաբար, պահպանում են հայ լեզուն, հայ գիրը, հայ գրականութիւնը։

Եւ մի տարուց աւելի է, որ «Մշակը» յորդոր է կարդում ռուսահայերին օգնութեան ձեռք կարկառել այդ վերին աստիճանի օգտակար և համակրելի հաստատութիւններին, որպէսզի նրանք կարողանան կատարել իրանց միսիան՝ գրագիտութիւն և ուսումն տարածել Հայաստանի մէջ։ Եւ սակայն ռուսահայերը դեռ անտարբեր և խուլ մնացին այդ յորդորներին։

Հրապարակի վրա դրված է դպրոցական ֆօնդի խնդիրը, ֆօնդի, որով պէտք է յաւերժացնել համազգային մեծ յոբելեանը։

Մենք առաջ ևս այն կարծիքին ենք յայտնել, որ դպրոցական ֆօնդը համազգային պէտք է լինի։ Ֆօնդը կը պահպանվի Էջմիածնում, սինօդում, բայց նրա տոկոսիքները կը գործադրվեն Ռուսաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի հայոց դպրոցների պահպանութեան վրա։

Ուրեմն թող հանդէս գան հայ բարեգործներ, հայ հարուստներ, նուիրելով կամ կտակելով որոշ գումարներ Թիւրքահայաստանի ուսման և կրթութեան գործի համար, յօգուտ Միացեալ Ընկերութեան և Հայկական Բարեգործական Միութեան։

Հ. Սաաքեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Н. Вр.»-ն առաջնորդող յօդուածում գրում է.

«Մեծ պետութեան արտաքին քաղաքականութիւնը չը պէտք է սահմանափակվի մարդասիրութեամբ։ Հայկական հարցի էութիւնը կայանում է նրանում, որ Ռուսաստանին շահաւէտ է ու անհրաժեշտ—րէալ միջոցներ ձեռք առնել հայերին թիւրքաց բռնութիւններից պաշտպանելու համար։ Փոքր-Ասիայում հայաբնակ երկիրները հանդիսանում են պատրաստի կամուրջ համիսլամական ապագայ նուաճումների համար դէպի անդրկովկասեան թիւրքերը։ Փոքր-Ասիայում թիւրքերի թիւը մօտ 8 միլիոն է, Կովկասում թաթարների թիւը երեք միլիոն է և հիւսիսային Պարսկաստանում—1½ միլիոն։ Բաւական է ոչնչացնել մի միլիոն հայերի, որ ընկած են Կովկասի և Փոքր-Ասիայի միջև, որպէսզի սուլթանը տարրեր ունենայ կազմելու միանման, ընդունակ դառնալու շատ ուժեղ պետութիւն 23 միլիոն ազգաբնակութեամբ։ Դիպլոմատիան չը պէտք է թոյլ տայ հայկական նահանգների համար պալիատիվներ, որոնք շուրջփակվում են բարենորոգումները թիւրք պաշտօնեաների ձեռքով իրագործելու մէջ։ Բարենորոգումների իրականացման գործը պէտք է յանձնվի եւրոպացիներին»։

—

Պետերբուրգում սպասվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամաւորը մի նամակով յանուն Թագաւոր Կայսրի։

Հայկական հարցի նոր ուղղութեան հետ, լուրերի համաձայն, Պետերբուրգում կազմակերպվում է «Pro Armenia» կոմիտէտ, որի մէջ մտնելու են նշանաւոր գործիչներ։ Կոմիտէտը հաստատվում է, որպէսզի գլուխ բերէ լայն բարենորոգումներ Թիւրքահայաստանում Ռուսաստանի օգնութեամբ, առանց Գերմանիայի միջամտութեան։

—

Կ. Պօլիս.—Լօնդօնում գտնվող Հակկը-փաշան տեղեկացրեց կառավարութեան, որ շուտով պայմանագիր է ստորագրվելու վեց անգլիացի մասնագէտների հետ, որոնք հրաւիրված են Անատոլիայի բարենորոգումները գործադրելու համար։ (Պ. Հ. Գ.)

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 21 մայիս

Տեղւոյս թիւրք խապլապետներն իրենց տիրապետած գիւղերուն և թաղամասերուն հետ չափազանց դաժան ու միջնադարեան աւատապետներու պէս կը վարուին։ Ասոնց մէջ ամենէն հռչակաւորն է Թօփալենց Հաջի Նազիֆ-աղան, որ ասկից շուրջ 15—20 տարի առաջ հազիւ դատարկ խոլ իշով մը մտած է դաշտի Տօմ գիւղը, և այժմ այդ 500 տարուան շէն ու պայծառ հայ գիւղը քարուքանդ ցրիւ տալէն յետոյ՝ բացի իր գիւղական կալուածէն՝ 40,000 օսմ. լիրայի հնչուն գումարի մը տէր կը հաշուի։ Ասոր անդրանիկ զաւակը Մուշի հռչակաւոր եր.-թիւրք Ֆալամազ-աղան է, որուն պարտէզն, այգին և պալատի նման քէօշկը հաստատուած են Մուշի Վերի թաղի դարաւոր մէկ գերեզմանատան վրայ։

Երեք հարիւր տնուոր վերին-թաղեցիք քանիցս ցաւալիօրէն կորսնցուցած են իրենց հողային դատը Ֆալամազ-աղայի դէմ։ Վերջերս օսմ. սահմանադրութեան օրով կրկին փորձեցին ակռայ կրճտեցնել Ֆալամազ-աղայի դէմ, բայց Ֆալամազ-աղան լակոնական ոճով հասկցուց հայերուն, թէ «քանի ժամանակը մերն է, ձեր գերեզմանատունը, ձեր դպրոցը և ձեր եկեղեցին ալ, եթէ ուզեմ, իմս են. իսկ երբ եղաւ Հայաստան, ես իմ կամքով իմ եղած-չեղածը կը թողում ձեզ և կապրիմ այնպէս, ինչպէս այժմ դուք կապրիք մեզ հետ»։

Այսօր լուր առինք, որ Բիթլիսի վալին հոս եկած է՝ ընդհանուր խաղաղութեան գործին հսկելէ աւելի հայոց հողային հարցը լուծելու միտումով։

Այսօր, վալին Մուշ ժամանելուն օրը, լուր հասաւ, որ աւրանցի Ասօյի տղայ Քօլանի սպաննողը, ուրիշ աւազակաբարոյ քիւրդերու հետ կռւի բռնուելով, սպաննուեր է։ Սպաննողի անունը քիւրդ Հասօ է. իսկ բուն աւազակապետ Ֆալամազ Ալիի տղայ Ֆէրիքն ազատ է և միշտ ահ ու դողի մէջ կը պահէ շրջակայ հայ գիւղօրայքը և մասնաւորապէս Աւրանը, որովհետև վերջինս տեսակ մը իր փախստեան պատճառ եղաւ։ Աւրանցիք խնդրագրով դիմեր են նորեկ կուսակալին, յայտնելով որ «պաշարման դրութեան մէջ ենք և կեանքի վստահութիւն չունինք լուծք ընելու»։ Կուսակալը խոստացեր է ամենաբուռն միջոցներ ձեռք առնել, և մենք յոյս ունինք, որ վերջապէս պիտի շարժի թիւրք կառավարութիւնը, բայց ե՞տ թէ առաջ, դա ցոյց պիտի տայ մօտաւոր ապագան։

* * *

Անցեալ թղթակցութիւններէս մէկը նուիրուած էր Տարօնի հայ վանքերուն, հարևանցի կերպով ցոյց տալով անոնց ցաւոտ կողմե[illegible] վարիչները [illegible] կրճտեցնել «Մշակի» և անոր տեղւոյս թղթակցին դէմ, հետամուտ ըլլալով իմանալ, թէ արդեօք ո՞վ է վերջինս և այլն։

Թղթակցի մը, մանաւանդ մեր այժմեան փափուկ պայմաններուն մէջ գործող թղթակցի մը պաշտօնը խորապէս ըմբռնելով՝ մեր ներքին, զուտ հայկական վէրքերուն վրայ մատս դնելով ու զանոնք մատնանշելով միայն անցայ։ Ըստ իս՝ մեր կեանքի այժմեան պարագաներուն մէջ ապրող թղթակցի մը շրջահայեցութիւնը թոյլ չպիտի տար առկէ աւելի ծանրանալ այդ վէրքերուն վրայ՝ զանոնք արիւնոտելու աստիճան։

Ես գիտեմ, որ իւրաքանչիւր վէրք, երբ ձեռք դպցնես անոր, կը ցաւի։ Արդ՝ իմ թղթակցի հանգամանքովս՝ ես մատս դրի մեր զուտ տեղական և ներքին-ազգային այդ վիրաւոր կողմին վրայ, չվախնալով երբէք ցաւ պատճառելէ։ Բայց, ինչպէս ըսի, աւելի չպիտի քրքրեմ այդ վէրքերը, որպէսզի չարիւնոտին։ Թող առոր վստահ ըլլան այդ վէրքերուն հեղինակները, այսինքն մեր վանքերուն վարիչ մարմինները։

Հիմա ատենը չէ մեր այդ ցաւոտ կողմերուն վրայ աւելի ծանրանալու։ Բայց անշուշտ պիտի գայ այդ վէրքերն ալ անդամահատելու ժամանակը։ Եւ ես վստահ եմ, որ այն ատեն մեր ազգային գործերուն վիրաբոյժները չպիտի դանդաղին զայնս արմատէն անդամահատել, առանց բնաւ ի նկատի ունենալու բարձրանալիք աղաղակները, վայնասունները ու վէրքերէն հոսելիք արիւններն ու ժահրերը։

Սպասենք ուրեմն այդ ժամանակներու գալուն։

Առ այժմ այսքանը՝ որպէս պատասխան ս. Կարապետի վանքի վանահայր Վարդան վ. Յակոբեանի և ս. Յովհաննու վանքի փոխ-վանահայր Մկրտիչ աբեղայի ակռայի կրճտոցներուն։

Ես հիմա պիտի լռեմ և չպիտի ծանրանամ իրենց գործունէութեան յոռեգոյն կողմերուն վրայ։ Թող առ այժմ ուրախանան։ Բայց իրենցմէ հաշիւ ստանալու և իրենց տխրելու ատենն անշուշտ շուտով կը հասնի։ Ես աւելի քան վստահ եմ ատոր։

Մշեցի

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԵՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ)

—o—

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(Վարչութեան անդամի մը և երեսփոխանի մը կարծիքը)

Ա.

Կ. Պօլիս, 19 մայիս

Այս կիրակի, օգտուելով առօրեայ աշխատութեանց դադարէն, ուրբաթ օրուան ազգային ժողովի դռնփակ նիստին արդիւնքը կունենամ, մին՝ ազգային վարչութենէն և միւսը՝ ազգ. ժողովէն մէկ-մէկ կարեւոր անդամի հետ։

Ազգ. վարչութեան անդամը մերձաւորապէս սա կերպով արտայայտուեցաւ հայկական խնդրոյն վրայ։

* * *

Ինչպէս գիտէք, օսմ. սահմանադրութեան առաջին օրերուն ամենքս ալ պահ մը միամտութիւն ունեցանք, թէ այլևս հայահալած քաղաքականութեան վերջ պիտի դրուէր։

Սակայն այս հաւատքը, շուտով խախտեցաւ, երբ քիչ յետոյ դարձեալ սկսան Կ. Պօլիս հասնիլ անապահովութեան և մասնակի սպանութեանց լուրեր, և կատարուեցաւ նոյնիսկ Ադանայի սոսկալի եղեռնը։ Այս մասնակի ու հաւաքական դէպքերու համար սահմանադրութեան վերահաստատութենէն յետոյ իրարու յաջորդող վարչութիւնները երբէք չդադրեցան շարունակ դիմումներ ընելէ։ Այս խնդրանքներուն Բ. Դուռը շարունակ միևնոյն պատասխանը տուաւ։ Խոստումներ ըրաւ և երբէք չգործադրեց։ Սակայն ասկէ առաջ գոնէ մեր դիմումները կընդունէին քաղաքավարի կերպով, աւելի մեծ անկեղծութիւն ցոյց կուտային և, ինչ որ ամենէն կարևորն է, կը հաւատային մեր խօսքին։ Հիմա, այսինքն մասնաւորապէս վերջին վեց ամիսներու ընթացքին, երբ հայկական խնդիրը Եւրոպայի մէջ ծեծուիլ սկսաւ, այդ ժամանակէն սկսեալ, կախուեցան, և հիմա չեն հաւատար մեր խօսքին, նուազ քաղաքավարութեամբ կընդունին և միշտ կը հեգնեն պատրիարքարանին դիմումները, ուղղակի կամ անուղղակի հասկցնելով մեզի, թէ «դուք հայերդ, խիստ վարպետորդի, դիտմամբ աղմուկ կը յարուցանէք միշտ թարմ պահելու ձեր խնդիրը և՝ Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրելու համար՝ կը չափազանցէք պատահած սովորական դէպքերը»։

Ասիկա լրջօրէն մտածելով ծանր ամբաստանութիւն մըն է պատրիարքարանին դէմ։ Վարչութիւնը այս ամբաստանութեան կարևորութիւն չտուաւ, քանի որ իր ստացած տեղեկութիւններուն չափազանցուած չըլլալուն և ստոյգ ու վաւերական ըլլալուն ապահով էր։ Միայն տեղի չտալու համար, որ կառավարութիւնը ոևէ սխալ կամ չափազանցեալ տեղեկատուութիւն պատրուակ բռնելով՝ պատրիարքարանի բոլոր տեղեկութիւնները անոր նման սուտ ու սխալ չը համարէ, իր առաջին գործերէն մէկն ըրաւ գաւառական առաջնորդներու խիստ հրահանգ տալ, որ դէպքերը և իրողութիւնները չչափազանցեն և խղճամիտ ճշգրտութեամբ մը ներկայացնեն զանոնք։ Արդարև՝ մինչև հիմա առաջնորդներէ տրուած ոևէ տեղեկութիւն չէ հերքուած։ Մեր վարչութիւնը իրեն սկզբունք ըրած ըլլալով մարդկային զոհողութիւն չընել և տեղի չտալ, որ առանց հայու Հայաստանի մէջ բարենորոգումներ գործադրուին, մեր բոլոր ուշադրութիւնը կեդրոնացուցինք այս խնդրոյն վրայ և միշտ Բ. Դրան մատնանիշ ըրինք պատերազմին պատճառով իսլամներու մէջ տեսնուած գրգռութիւնը ընդդէմ քրիստոնեաներու։ Բ. Դուռ ուշադրութիւն չընելով մեր դիմումներուն, գաւառներու հարստահարիչներն համարձակեցան հետզհետէ աւելի յանդուգն դառնալ։ Ջարդի հաւանականութիւնները կը շատնային։ Կը կատարուէին այնպիսի դէպքեր ու իրողութիւններ, որոնք նախանշանները եղած էին ասկէ առջի բոլոր ջարդերուն։ Եւ իրապէս հրաշքով մըն էր միայն, որ Կիլիկիոյ հայութիւնը աւելի սարսափելի և աւելի սոսկալի ջարդէ մը փրկուեցաւ։

Այս դժնդակ կացութեան մէջ ներքին գործերու մինիստր Հաջի Ադիլ-բէյի ցոյց տուած կոշտ վերաբերումը հանդէպ հայ պատուիրակութեան՝ յայտնի նշան մըն էր կառավարական մեղսակից վերաբերման կամ լռելեայն քաջալերութեան։ Իբր մտայնութեան մը պատկերացումը մենք այս դէպքին կարևորութիւն տուինք, եթէ ոչ անձնապէս Հաջի Ադիլ-բէյի անձը ոևէ նշանակութիւն չունի և հայ պատուիրակութեան պետը՝ մեր վարչութեան ատենապետը՝ Գարաեան էֆ., որ շատ մը Ադիլբէյեր կարժէ, կրնար առանց անոր մերժումը նկատի առնելու բանալ մինիստրին սենեակը և ներս մտնել և կրնար պարտաւորել, որ լսէ զինքը։ Ասիկա չըրաւ, վասնզի կուզէր հասկցնել, թէ օսմ. պետութեան ներքին գործերու մինիստրը՝ ջարդի մը հաւանականութեան հանդէպ գտնուող ժողովուրդի մը ներկայացուցիչներուն հանդէպ ինչ կերպով կը վերաբերուէր։

Հաջի Ադիլ բէյ կուզէր այս կերպով կըրկին ամբաստանել հայերը, որ ասիթէն օգուտ քաղել կուզեն. մենք ալ ընդհակառակը ամեն կողմ հասկցուցինք, թէ անոնք մեր ջարդուիլը կուզէին։ Եւ կը կարծեմ, թէ մեր ըսածը աւելի ապացուցեալ էր, քան թէ անոնց ըսածը։ Վերջին անգամ, երբ ազգ. ժողովը մեր հրաժարականը մերժեց, յիշատակագիր մը մատուցինք եպարքոսին։

Այս առթիւ եպարքոսին հետ մէկ ժամ տեւող տեսակցութիւն մը ունեցաւ ներկայացող պատուիրակութիւնը։ Եպարքոսը բաւական պաղ վերաբերում մը ցոյց տուաւ և ըսաւ այնպիսի խօսքեր, որոնք դարձեալ կրնան վերջին ժամանակներու թիւրքական բուլիլ։ Մահմուդ-Շէվքէթ-փաշա կատարուելիք բարենորոգումներէն ճառեց, Հայաստանի մէջ զինուորական զօրութիւնը շատ նուազած ըլլալը մատնանիշ ըրաւ, ռուսական գրաւման մը պարագային հայոց սպառնացող աղէտը մատնանիշ ըրաւ, սակայն և ոչ մէկ հաստատուն երաշխաւորութիւն կար իր խօսքերուն մէջ։ Յիշատակագրին արդիւնքին վրայ շատ մեծ հաւատք մը չունիմ ես անձնապէս, և կը կարծեմ, թէ ինծի համամիտ են նաև իմ պաշտօնակիցներս։

Արդիւնքը արդէն հիմակուընէ գիտենք, սակայն ինքզինքնիս միամիտ կը ձեւացնենք և հաւատալ կը կեղծենք, թէև այնքան միամիտ չենք անշուշտ։ Բայց օսմ. կառավարութիւնը բարենորոգում գործադրելու տրամադիր կամ կարող չըլլալուն համար, մենք չպիտի դադրինք դիմում ընել, վասնզի լռութիւնը այս պայմաններուն մէջ վատութիւն պիտի ըլլայ, և վարչութիւնը չի կրնար գէթ տկարներու զօրութիւնը եղող բողոքելու իրաւունքը անգործադրելի թողուլ։ Մենք բողոքի զանազան ձևերը գործադրելու համար էր, որ միայն վերջին ազգային ժողովին մէջ ժամանակ ուզեցինք։ Եւ արդէն կը տեսնես, թէ այսօրուընէ սկսեալ գործի սկսած ենք։ Երէկ պատրիարքը շատ կտրուկ կերպով նոր դիմում մը կատարեց եպարքոսին, և ասկէ վերջն ալ դեռ ունինք ընելիքներ։ Գաւառի հայութեան կացութեան մասին ալ՝ առնուած [illegible] ալ ազգ. ժողովին ներկայացուցինք ուրբաթ օրը։ Օրէ-օր աւելի կը ծանրանայ Հայաստանի վիճակը. և եթէ այս սպառնալից դրութիւնը շարունակէ, շատ կը վախցուի, որ հետևանքը սոսկալի պիտի ըլլայ։

Հիմա չորս գլխաւոր խնդիր մեծապէս մտատանջ կընեն զմեզ։

ա) Գաղթային այն մեծ հոսանքը, որ ամեն ժամանակէ աւելի սաստկութեամբ այս տարի կը տեսնուի գաւառներու մէջ։ Ոչ բռնապետութեան և ոչ ալ սահմանադրութեան շրջանի մէջ տեսնուած էր այսքան մեծ թուով և խմբական գաղթում դէպի արտասահման։ Ասիկա ազգային ընդհանուր շահու տեսակէտով սոսկալի վտանգ մըն է, որուն առաջքն առնելու համար վարչութիւնը բացարձակապէս զուրկ է միջոցներէ։

բ) Դրութիւնը այնքան լարուած է, որ հայերը կը վախնան իրենց քաղաքներէն ու գիւղէն դուրս ելլելու, հետևաբար դաշտային աշխատութիւնները, այս գարնանացանքի միջոցին, բացարձակապէս դադրած են։ Երբ ցանքը տեղի չունենայ, բնական է թէ քաղն ալ անկարելի է որ տեղի ունենայ, և սովը առաջիկայ ձմեռ անխուսափելի պիտի ըլլայ, ինչ որ արդէն իբր հետապատկեր մը տեսնելով՝ շատեր կը գաղթեն ու կը հեռանան իրենց երկրէն։ Սովի դէմ ալ վարչութիւնը շատ դժնդակ կացութեան մը առջև պիտի գտնուի, և հիմա տակաւին չի հասկնար կառավարութիւնը, սակայն ինքն ալ հաւասարապէս պիտի տուժէ, վասնզի թիւրքերն ալ պատերազմին պատճառով չեն կրցած ցանք կատարել։

գ) Տեղական կառավարութիւնները կը խոստովանին, թէ իրենք վտանգին առջևը առնելու անկարող են։ Ասիկա թէև կառավարութեան արժանապատուութեան համար վիրաւորիչ բնոյթ մը ունի, սակայն քիչ շատ իրականութեան համապատասխան է։ Մահմուդ Շէվքէթ-փաշա, զինուորները պատերազմի դաշտ ղրկուած ըլլալուն համար, զինուորական զօրութեան խիստ տկարատովանած է։ Կառավարութիւնը այս առթիւ յայտարարութիւնը ընելով կրնայ ուրիշ դիտում մըն ալ ունենալ։ Առաջիկային երբ աղէտ մը պատահի, կառավարութիւնը կերևայ թէ կուզէ ասով արդարացնել ինքզինքը, ըսելով թէ ինքն արդէն շատոնց յայտնած էր, թէ ինք վտանգին առջևը առնելու անկարող է։ Ասիկա ահարկու վտանգ մըն է, վասնզի անիշխանութեան մը յայտնի նշանն է։

դ) Զանազան տեղերէ լուրեր կան, թէ կառավարական պաշտօնեաները կը վռնտուին տեղական էշրաֆին և բռնաւէրներու կողմէ։ Ասիկա ալ նշան մըն է, թէ իշխանութիւնը շատ տկարացած է և բռնաւէրներն ու տեղական ազդեցիկ անձերը գրաւած են կառավարութեան դերը, և տեղական պաշտօնեաները վռնտելու չափ ույժ ու կարողութիւն ունին։ Այս անիշխանական վիճակը յուսահատական է։ Եթէ այս վիճակը շարունակէ Հայաստանի մէջ, ինչպէս ըսի, բարենորոգումները Արարատի շուրջ պիտի գործադրուին այն ատեն, երբ հոն հայ մը մնացած չէ։ Բնաջնջման քաղաքականութիւնը հիմա նոյնքան սաստիկ կը գործադրուի, որքան Համիդի ատեն։ Այս ահարկու վտանգին առջև վարչութիւնը յուսահատ մարդոց նման ամեն միջոցի պիտի դիմէ, պատէ-պատ, քարէ-քար պիտի զարնէ իր գլուխը, դարման մը գտնելու համար այս կացութեան։ Սակայն իբր վարչութեան անդամ [illegible] մէջ տեսնուած պատրիարք և վարչութիւն համախումբ հրաժարեցնելու ձեռնարկին համամիտ չեմ։ Պատրիարքին հրաժարականը՝ իբր վերջին զէնք մը կրնայ գործածուիլ, անոր տալով նահատակի ձև մը։ Սակայն վարչութիւնը միշտ պէտք է մնայ, ձայն բարձրացնելու համար։ Նոյնիսկ կրօնական ժողովի նոր ընտրութեան անգամ համամիտ չեմ, և որչափ ալ իր օրինական շրջանը լրացած, կարևոր կը համարիմ որ պահ մը ևս իր պաշտօնը շարունակէ։

Վարչական և պատրիարքական տագնապ առաջ բերելու համար վարչութեան մէջ տարակարծիքութիւն չկայ, ինչպէս գրուած էր «Մշակի» մէջ, մանաւանդ այն օրէն յետոյ, երբ այն մասին յանձնարարութիւններ և անուղղակի կերպով թելադրութիւններ եղան կարևոր շրջանակներէ, որոնք աւելի իրազեկ ու գիտակ են օրուան կացութեան

* *

Վարչութեան անդամին այս յայտարարութիւնները ստանալէ յետոյ դիմեցի հեղափոխական ժողովի ամենէն ազդեցիկ անդամներէն մէկուն, որուն յայտարարութիւնները կը ղրկեմ յաջորդով։

Հայորդի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ

—o—

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ*)

(Առաջնորդող յօդուած «Новое Время» լրագրի)

Եթէ դիւանագիտական ցանկանում է մի լուրջ հետևանք ստանալ, նա պարտաւոր է պահանջել թիւրքերից գործադրել այնպիսի ռեֆորմներ, որոնք տան անմիջապէս շօշափելի արդիւնք։ Առաջին տեղը այդ կողմից պէտք է լինի հայկական վիլայէթների աշխարհագրական դասաւորումը։ Գործը կայանում է հետևեալի մէջ։ Ռուս-թիւրքական պատերազմից առաջ հայերը ներկայացնում էին շատ հոծ զանգուած, որ յայտնապէս գերակշռում էր Էրզրումի վիլայէթում։ Այդ հանգամանքը անհանգստացրեց կ. Պոլսի [illegible] և նրանք դիմեցին [illegible] վերակազմելու ընդրոշ եղանակին. Նրանք կազմեցին Արևելեան Անատօլիայում մի շարք նոր վիլայէթներ այնպիսի հաշւով, որ այդ վիլայէթներից ամեն մէկում (Բիթլիս, Վան, Սըվազ, Դիարբէքիր, Մամուրէթ-ուլ-Ազիզ) համեմատաբար մի փոքրիկ հայկական սեպ միայն խոշոր մահմեդական կարուածքի հետ։ Շնորհիւ դրան, Արևելեան Անատօլիայում ստացվեց մի շարք աշխարհագրական միութիւններ, որոնց ամեն մէկի մէջ հայերը փոքրամասնութիւն են կազմում։ Եթէ թռուցիկ ակնարկ ձգենք քարտէսի վրա, կարելի է շօշափելի ապացոյց գտնել այն մասին, թէ որքան արուեստական էր հայաբնակ վիլայէթների նոր բաժանումը. այն ժամանակ, երբ փոքր-ասիական վիլայէթի նորմալ մեծութիւնը անցնում է 120,000 քառ. կիլոմէտրից, Բիթլիսն ունի միայն 29,000 քառ. կիլոմէտր, Մամուրէթ-ուլ-Ազիզը՝ 37,000 քառ. կիլ. և այլն։ Կը նշանակէ՝ ամեն բան, սկսեալ առաջ դասաւորութիւնից և վերջացած պետական անտեսութեամբ, զոհ էր բերվում այն գաղափարին, թէ հայերին պէտք է ցիր ու ցան անել զանազան նահանգների մէջ։ Այդպիսի վերաբաժանման հետևանքները հասկանալի են ինքն ըստ ինքեան։ Այն ռեֆորմները, որոնք պիտանի են հայկական գաւառների, հոծ և կուլտուրական ազգաբնակութեան համար, հանդիսանում են բոլորովին անկիրառելի, երբ նրանց տարածում են և հայերի և կիսա-նստա- [illegible] թեան որևէ մի պետական-իրաւական բարւոքման հիմն հանդիսանում է կազմակերպութիւնը մի միասնական վիլայէթի, աւելի կամ նուազ յարմարեցված այն հողերի պարփակման, որոնք բնակված են միայն հայերով։ Մինչև որ այդ պարզ միջոցը ձեռք չառնվի, կարելի է համարել, թէ թիւրքերը անպարտելիօրէն խոչընդոտ են հանդիսանում եւրոպական դիպլոմատների բոլոր ձեռնարկութիւններին։

Սակայն վիլայէթների վերադասաւորմամբ, ի հարկէ, չէ լրանում այն միջոցների ամբողջութիւնը, որոնք պահանջվում են հանգամանքներից։ Հայկական ազգը, յանձին իր լաւագոյն ներկայացուցիչների, պահանջում է, որ ապագայ, զուտ հայկական վիլայէթին ի գլուխ դրվի մի այնպիսի անձն, որ սուրբական կախումն չունենայ կ. Պոլսից և հետևաբար կարողանայ ինչպէս հարկն է իրագործել կեանքի մէջ ռեֆորմները։ Հայերի կողմից մատուցված մի յիշատակագրի մէջ ցոյց է տրված, թէ Էրզրումում ընդհանուր-նահանգապետը պէտք է նշանակվի տեղական քրիստոնեաներից կամ, լաւագոյն դէպքում, եւրոպացիներից։ Այդ ընդհանուր-նահանգապետին կից կարելի է կարգել մի խորհրդակցական օրգան, ընտրված տեղական ազգաբնակութիւնից։ Այդպիսի իշխանութիւն կերաշխաւորէր հայերին ապահովութիւն և պրօգրէսի անհրաժեշտ մինիմումը։ Ի հարկէ ընդհանուր-նահանգապետի ընտրութեան հարցի մասին կարող են լինել վէճեր։ Մեծ պետութիւնների յիշատակագիրը (1895 թ. մայիսին) բաւականանում էր նշանակմամբ այնպիսի վալիի, որ եւրոպական կօնցերտի հաւանութիւնը ստանար. բայց 1895-ի յիշատակագիրը պահանջում էր մի առանձին եւրոպական վերահսկիչ յանձնաժողովի հաստատութիւնը և յատուկ եւրոպացի տեսուչների նշանակումը։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

29 մայիսի

Պետերբուրգ.—(Պաշտօնական)։ Թարգմանութիւն Բարձրագոյն համանման հեռագրի բուլղարական ցար Ֆերդինանդին և սերբիական թագաւոր Պետրին, ուղարկված 1913 թ. մայիսի 26-ին. Մոսկվայից. «Չորս դաշնակից պետութիւնների մինիստր-նախագահների Սալօնիկում ենթադրված տեսակցութեան և ապա Պետերբուրգում հանդիպելու մասին լուրն ինձ սաստիկ հաճոյք պատճառեց, որովհետև այդ դիտաւորութիւնը ցոյց է տալիս բալկանեան պետութիւնների ցանկութիւնը՝ համաձայնութեան գալ և կնքել դաշն, որ մինչև այսօր փառաւոր պտուղներ է տուել։ Ծանր զգացումով իմանում եմ Ես, որ այդ որոշումը դեռ չէ իրագործվել և որ բալկանեան պետութիւնները ըստ երևոյթին պատրաստվում են եղբայրասպան պատերազմի, ընդունակ նսեմացնելու այն փառքը, որ վաստակեցին միասին։ Այդ այնքան պատասխանատու րօպէին՝ Իմ իրաւունքը և Իմ պարտքը ստիպում են Ինձ դիմել անմիջական կոչով ձեր մեծութեան։ Երկու ազգերը՝ բուլղարական և սերբիական՝ Ռուսաստանին են յանձնել իրենց դաշնակցական դաշնագրի մէջ լուծումը ամեն մի վէճի, վերաբերեալ այդ դաշնագրի կանոնների գործադրութեան և նրան վերաբերող համաձայնութիւնների։ Ես խնդրում եմ ձեր մեծութեանը մնալ հաւատարիմ ձեր ստանձնած պարտաւորութիւններին և ապաւինել Ռուսաստանին (... թողնված է. պահանջվում է ուղղումն) ներկայ վէճի՝ Բօլգարիայի և Սերբիայի միջև։ Նկատելով միջնորդ դատարանի ֆունկցիաները ոչ իբրև արտօնութիւն, այլ իբրև ծանր պարտականութիւն, որից շեղվել Ես հնարաւոր չեմ համարում՝ Ես պարտք եմ համարում նախազգուշացնել ձեր մեծութեանը, թէ պատերազմը դաշնակիցների միջև չէ կարող թողնել Ինձ անտարբեր։ Ես անհրաժեշտ եմ համարում յայտնել, թէ այն պետութիւնը, որ սկսէ պատերազմ, պատասխանատու կը լինի դրա համար սլաւոնականութեան առաջ, և թէ Ես կը պահեմ Ինձ համար լիակատար ազատութիւն որոշել, թէ ինչ դիրք է բռնելու Ռուսաստանը այնքան յանցաւոր կռւի հնարաւոր հետևանքների վերաբերմամբ»։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

29 մայիսի

Սօֆիա.—Գեներալ Պապրիկովը նշանակվեց Սիլիստրիայի վերաբերմամբ Պետերբուրգեան արձանագրութիւնն իրականացնող մասնաժողովի անդամ։ Դանեվը խօսակցեց մի քանի կուսակցութիւնների պարագլուխների հետ լայն կօալիցիօն հիմունքներով կաբինէտ կազմելու համար։

Պաշտօնական «Միր» ասում է. «Սերբերը պատերազմ են կամենում։ Բօլգարիայի ստեղծած պայմաններում միջին ճանապարհ չը կայ։ Կառավարութիւնը պէտք է անյապաղ պահանջէ գրաւել անվիճելի գիծը և սպասելով միջնորդ դատարանի վճռին՝ զօրքեր ուղարկել վիճելի շրջանի բոլոր տեղերը»։

—

Սալօնիկ.—Բօլգար զօրքերի մէջ ուժեղացել է խօլերան։ Յոյն իշխանութիւնները մտադիր են սահմանել սանիտարական կորդօն բօլգար և յոյն զօրքերից գրաւված տարածութեան միջև։

—

Կ. Պօլիս.—Պաշտօնական թիւրք շրջանները ուշադիր հետևում են դաշնակիցների երկպառակութիւններին՝ յուսալով նրանց զինված ընդհարման դէպքում օգուտ քաղել։

Անընդհատ ռազմամթերք է ուղարկվում Չաթալջա։

—

Բուխարէստ.—Մամուլը գտնում է, որ Ռումինիան չէ կարող սառնասիրտ [illegible] դերում մնալ հանդէպ միջադէպի, և յայտնում է, որ պատերազմի ազդը ստանալուն պէս՝ Ռումինիան պէտք է զօրաժողով կայացնէ։

—

Բերլին.—Հաւաստի աղբիւրից տեղեկացնում են, որ մեծ պետութիւնները մտադիր են հրաւիրել Թիւրքիային և բալկանեան դաշնակիցներին որքան կարելի է շուտով կատարել մասնակի զինաթափումն։ Դրութիւնը համարվում է չափազանց լուրջ, թէև խաղաղ վախճանի յոյսը դեռ կորած չէ։

—

Բերլինի և Լօնդօնի լրագիրների տեղեկութիւնների համաձայն, անկարելի է, որ պատերազմ չը լինի Բօլգարիայի և Սերբիայի միջև։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕԼԳԵՆԻՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ*)

—

Ընդմիջումից յետոյ ուղիղ ժամը 11-ին, Օլգենինը իր դասախօսութիւնը շարունակում է։

Կրկնելով, որ ինքը անձնապէս իբրև սոսկ ժուռնալիստ իր ճանապարհորդութիւնից յետոյ յանգել է բարենորոգումների նկատմամբ բացասական եզրակացութեան, Օլգենինը ջանում է հիմնաւորել այդ թէզիսը։ Ֆրանսիան նոյնպէս՝ Անգլիայի նման՝ Փոքր Ասիայի վերաբերութեամբ հետամուտ է անձնական շահերի։ Ինքնին XX մերկանտիլ դարը սոսկ շահախնդրութեան դար է։ Անցել է այն երանելի ժամանակը, երբ Նապօլէօն Մեծն ասում էր, թէ երբ ծածանվում էր ֆրանսիական դրօշակը, նրա ետևից գալիս էր ֆրանսիական քաջարի զօրքը՝ որևէ մեծ գործ կատարելու համար։

Իսկ այժմ, երբ ասվի, թէ կը ծածանվի ֆրանսիական դրօշակը, նրա ետևից կը գան փեթեզակներ, չարչիներ...

Արդարև, Ֆրանսիան ոչ մի ընդհանուր կապ չունի հայերի հետ. ֆրանսիացին հայի վրա նայում է վերից։ Ոչ թէ նա կարեկից է թիւրքահայի տանջանքներին, այլ նա Հայաստանի վրա նայում է իբրև անտեսական շուկայի վրա։ Իբրև արտադրող երկիր, Հայաստանը ներկայումս նշանակութիւն չունի, որովհետև խեղճ է, զուրկ է հողից, բուսականութիւնից։ Անցնում ես հարիւրաւոր վերստեր, և քո առաջ շարունակ քարաժայռեր են ու մերկութիւն։ Ցիրուցան տեղ-տեղ եղել են բնական հարստութիւններ, սակայն այդ արդէն անցել է անցեալի շահագործութեան բովից. կան երկաթ, աղ։ Հասկանալի է այդպիսով, որ ոչ արդիւնաբերութիւնը, ոչ էլ առևտուրն են, որ հարկադրելու են Ֆրանսիային և Անգլիային ձգտել դէպի Հայաստան։ Այլ քաղաքական նկատումներով նրանք շուկայ են որոնում հայկական շրջաններում։

Մինչդեռ Ռուսաստանի շահերը Հայաստանում ուժեղ են։ Հայ ազգաբնակութեան հոծ մասը բնակվում է ռուսական սահմաններին կից, որով և այդ տեղերում զարգանում է ռուսական առևտուրը շնորհիւ ինչպէս հայերի, այնպէս և գաղթական ռուսների։ Մասնաւորապէս ռուս գործարանատէրերը, որոնք կարող էին գրական գործ կատարել, իրապէս ոչինչ չեն ձեռնարկում Փոքր Ասիայում։ Վերջերս մի քանի ռուսական խոշոր ֆիրմաներ անկարող եղան կատարել յանձն առած պատուէրը։ Միւս կողմից՝ Թիւրքահայաստան ուղարկվող ռուս վօյեաժօրները անտեղեակ են լինում յաճախ երկրին։ Թիւրք կառավարութիւնն էլ իր հերթին է հալածում այդ վօյեաժօրներին ու առհասարակ ռուս առևտրին խոչընդոտ հանդիսանում։

Օլգենինը մի օրինակ բերեց, թէ ինչպէս Էրզրումի նահանգում տեղական թիւրք նահանգապետի կարգադրութեամբ նշանակվում է մի յատուկ մասնաժողով՝ բժիշկներից, որպիսի մասնաժողովը իր եզրակացութիւնն է յայտնում, թէ Թիւրքիա կարելի է ներմուծել միայն ֆրանսիական ու աւստրիական շաքար, և ոչ մի դէպքում՝ ռուսական շաքար, որ, մասնաժողովի կարծիքով, պարունակում է մարդու առողջութեանը վնասակար տարրեր...

Թիւրք կառավարութիւնը մինչև օրս մազաչափ անգամ չէ կանոնաւորել սահմանային ճանապարհները, խճուղիները։

Օտարազգի մեծ պետութիւնները, նայելով Հայաստանի վրա իբրև սոսկ անտեսական շուկայի վրա, միևնոյն ժամանակ օտար չեն Ռուսաստանի դէմ կռւու պատնէշ ստեղծելու տենդենցից։

Այս ուրեմն ռուս հասարակութեան համար պարզ պէտք է լինի, որ հայկական հարցը և ռուսական է։ Որ այդ այդպէս է, երևում է այն հանգամանքից, որ դէպի Ռուսաստանը տածվող ձգտումը ընդհանուր է. թէ հայը, թէ թիւրքը, թէ քիւրդը և թէ եւրոպացին զգում են, գիտեն և համոզված են, որ վաղ թէ ուշ՝ Ռուսաստանը ակտիվ կերպով հանդէս է գալու Փոքր-Ասիայում։ Այս րօպէիս չերքէզները և մուհաջիրները (գաղթականները) նոյնպէս իրենց երեսը դարձնում են Ռուսաստանի կողմը, և այդ ուղղութեամբ պրօպագանդա է մղվում նրանց մէջ։ Դա բացատրվում է նրանով, որ չերքէզները ներկայանում են մի տեսակ երկրորդ սերունդ. միւս կողմից նրանց անտեսական դրութիւնը նոյնպէս շատ [illegible] է. նրանց միջից ևս տարվում են զինուորներ. և վերջապէս չերքէզները ցեղական կապեր ունեն ռուսների հետ։

Եթէ, ուրեմն, անգամ մահմէդականների մի մասը ձգտում է դէպի Ռուսաստանը, ապա հայը, որ պատմականօրէն շաղկապված է եղել Ռուսաստանի հետ, ձգտել է միշտ դէպի նա և այժմ էլ ամենուրեք այդ ձգտումը վառ է հայի մէջ։

— Ես հպարտանում էի,—ասաց Օլգենինը,—երբ տեսնում էի, թէ ինչպէս խանդավառ, սիրաքորով տենչանք գոյութիւն ունի դէպի իմ հայրենիքը։ Գուցէ իմ խօսքերս երևան միակողմանի, սակայն ես կը յենվեմ ռուս հիւպատոսների տեսակէտների վրա։

Եւ Օլգենինը պատմում է մինը միւսից աւելի յուզիչ դէպքեր։ Այսպէս՝ հայկական մի գիւղում մի ծերունի, որին նայողները անուանում են հոգեկան հիւանդ, ամեն օր կանգնում է երեսը դարձնելով դէպի Արևելք և լալիս է։ Նրան ուղղված հարցին նա տալիս է մի լակօնական պատասխան՝ «Չէ գալիս Մոսկովի քեռին»...

Մի ուրիշ օրինակ։ Վանի փոխ-հիւպատոսը պատմում է, թէ իր շրջագայութեան միջոցին երբ ինքը Հայկանետ գիւղումն էր, նրան մօտեցաւ մի շատ աղքատ հայ գիւղացի և մեկնելով նրան ռուսական մի հին ռուբլի՝ ասաց. «Ես սրանից աւելի լաւ բան չունեմ. ես տալիս եմ քեզ՝ ինչ որ ունեմ. վեր առ այս ռուբլին և միջնորդիր Ռուսաց Ցարի առաջ, որ ռուսները շուտով գան այստեղ»։

Մի երրորդ տեղում մի ծերունի ամենայն օր գնում է ռուսաց գերեզմանատուն և երկրպագում է գերեզմաններից մինին։ Պարզվում է, որ ծերունուն երազում ասել են, թէ երբ գերեզմանից լսվի «այո» խօսքը, կը նշանակէ՝ Ռուսաստանը գալու և փրկելու է թիւրքահային։ Ու ծերունին, չը կորցնելով իր հաւատը, ամեն օր գնում է գերեզմանատուն՝ լսելու այնքան անձկալի «այո»-ն...

Հայի այդ ջերմ հաւատը արդարանում է անցեալով։ Օլգենինի ասելով, չը նայած թիւրքաց կառավարութեան բռնի միջոցներին, այսօր էլ Թիւրքահայաստանի խուլ անկիւններում հայ ընտանիքներում պատերից կախված կան կայսերական զոյգի պատկերները... Ռուսաստանը պէտք է որ ակտիվ միջամտէ հայկական հարցում հէնց իր սեփական շահերից դրդված։ Թիւրքաց հակաքրիստոնէական քաղաքականութիւնը այսօրվայ չէ, այլ նա ապագայի քաղաքականութիւն է. վաղ թէ ուշ՝ Ռուսաստանը իրան ստիպված է զգալու անհրաժեշտաբար լուծել հայկական հարցը։ Թիւրքահայ բովանդակ ժողովուրդը համոզված է, որ միայն Ռուսաստանը իր պատմական միսիայով պաշտպան է կանգնելու բոլոր ճնշված ու հարստահարված քրիստոնեայ ժողովուրդներին։ Ռուս հասարակական միտքը միշտ արթուն է եղել բոլոր հալածված ազգերի նկատմամբ։ Այսօր էլ քաւութեան նուազ դարձած և զանութեան ու փորձանքների բաժակը քամած թիւրքահայութիւնն իր աչքերը ուղղել է դէպի քրիստոնեայ Ռուսաստանը։ Թող հեռու վանվի մինչև այժմ եղած անտարբեր վերաբերմունքը և Ռուսաստանը թող իր հզօր ձայնը հնչեցնէ։ Եթէ այդ չանվի, մենք յանցաւոր կը լինենք մի նահատակվող քրիստոնեայ ժողովրդի և ռուսական պետականութեան առաջ... (բուռն ծափահարութիւն)։

Բացի ռուսաց հասարակական կարծիքից իրանք հայերն ևս աշխատելու են ռացիոնալ կերպով, միաբան։

Կրկին ցոյց տրվեցին մնացած պատկերները մոգական լապտերով։

Շարունակելով խօսել, դասախօսը մատնանշեց այն լուրջ վտանգի վրա, որ կը ստացվի, եթէ մեծ պետութիւնները արհեստականապէս պահեն Հայաստանի ներկայ դրութիւնը։ Բարենորոգումներ տալու դէպքում իսկ գործողները դարձեալ թիւրքեր կը լինեն։

Դասախօսը բերում է մի շարք օրինակներ այն մասին, որ զանազան ժամանակներում եղել են այս կամ այն պայմանագրերը (ի թիւս որոց Բեռլինի դաշնագիրը) Հայաստանում դրութիւնը բարելաւելու մասին, բայց խոստումները մնացել են միայն խոստումներ և թիւրքահայ դժխեմ իրականութիւնը մնում է էլի նոյնը։ Յիշում է ամերիկական պաստոր Գրիմմի կարծիքը, թէ Թիւրքիան ինքն անկարող է ու անընդունակ բարենորոգումներ մտցնել. հայերին փրկելու համար հարկ անհրաժեշտ է ազատել նրանց Թիւրքիայի ճանկերից։

---

*) Տես «Մշակ» № 116.

*) Տես «Մշակ» №№ 115 և 116.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

29 մայիսի

Բեռլին.—Րէյխստագ։ Բէտման-Հոլվէգը իր ճառը սկսեց խնդրելով նորից ընդունել երեք հեծելազօր կազմակերպելու օրինագիծը, որ մերժել է հանձնաժողովը։ Բէտման-Հոլվէգը ասաց. «Կառավարութիւնը պահանջ է դնում, որպէսզի զինված ուժերի ուժեղացումը իրականացվի անմիջապէս։ Այդ գերագոյն սկզբունք է, որին համաձայնեցնում եմ ես իմ վարմունքը, հետևողականութեամբ։ Այս սկզբունքի հետ կայ և մի ուրիշ պահանջ, որպէսզի չը կրճատվեն ոչ պետութեան, ոչ դաշնակից տէրութիւնների ֆինանսները»։ Պետական կանցլէրը համոզված է, որ պետական ինքնապաշտպանութեան օրինագիծը, ինչպէս և արտակարգ ծախքերը ծածկելու համար որոշված միանուագ գումարները կընդունվեն։ Րէյխստագը չէ կամենում, որպէսզի նրա որոշած սպառազինումը գոյութիւն ունենայ միմիայն թղթի վրա, նահանջել անկարելի է, այլապէս յանցանք կը լինի հայրենիքի առաջ»։ Կանցլէրը աւարտեց իր ճառը յորդորելով բոլոր կուսակցութիւններին գործը վախճանին հասցնել։ Կանցլէրի կարճառօտ ճառը ուժեղ էր։ Զինուորական օրինագծի քննութեան ժամանակ կենտրոնի ներկայացուցիչները, ազգային-լիբէրալները և առաջադիմականները խօսեցին յօգուտ նրա՝ հիմնաւորելով իրանց կարծիքը Ֆրանսիայի սպառազինմամբ։

—

Բեռլին.—Մայիսի 28-ին րէյխստագը ձեռնարկեց զինուորական բարենորոգման օրինագծի երկրորդ ընթերցման։ Նրա քննութեան առիթով ներքին քաղաքական կացութիւնը ներկայանում է վերին աստիճանի խճճված, որովհետև կենտրոնն և աջակողմեանները պահանջում են մինչև օրինագիծը ընդունելը միջոցներ որոնել առաջիկայ ծախքերը ծածկելու համար. կառավարական նախագծերը ոչ ոքի չեն բաւաբարեցնում։ Խօսում են նոյնիսկ՝ թէ գուցէ րէյխստագը արձակվի, եթէ նախագիծը մերժվի սօցիալիստներից և կենտրոնից։

—

Բրիւսէլ.—Սենատը ձեռնարկեց զինուորական բարենորոգման քննութեան։ Մինիստր-նախագահը յայտնեց, որ ձեռնարկութիւնների իրականացումը կը պահանջէ 284 միլիօն ֆրանկ։ Ծածկելու համար հարկ կը լինի փոխառութեան։

—

Հռոմ.—«Մէսաժէրօյի» տեղեկութիւնների համաձայն, վճռված է շուտով ուժեղացնել նաւատորմը ընդհանուր տիպի 4 դրահանաւով։

—

Լօնդօն.—Համայնքների պալատում, երբ Ասկվիտը ճառում էր ֆինանսական բիլլի հարցի մասին, հասարակութեան միջից վերնասրահից նետվեց մի տոպրակ՝ ալիւրով լի՝ մինիստրական աթոռի ուղղութեամբ։ Տոպրակն ընկաւ նախագահի բազկաթոռի մօտ։ Յետոյ վերնասրահից թափվեց թռուցիկների անձրև։ Տոպրակ նետողը անմիջապէս դուրս տարվեց վերնասրահից։ Կարծում են, որ նա՝ սուֆրաժիստուհիների կողմնակիցներիցն է։ Ասկվիտը հանգստութեամբ շարունակեց իր ճառը բոլոր աթոռների բուռն ծափահարութիւնների տակ։

—

Լօնդօն.—Ոստիկանութիւնից գրաւված հրացանները նշանակված էին Ուլստէրի ունիօնիստների համար, որոնք դէմ են իրլանդական հօմրուլին։ Մի նաւ զէնք՝ արդէն բռնվել էր Դուբլին մեկնելու միջոցին։

Համայնքների պալատը երկու օրվայ վիճաբանութիւններից յետոյ երկրորդ ընթերցումով ընդունեց հօմրուլի օրինագիծը 368 ձայնով ընդդէմ 270-ի։

Ոստիկանութիւնը ձեռք ձգեց 4000 հրացան Գամբերմիլում։

—

Լիսաբօն.—Կամօէնսի յօբելեանի տօնակատարութեան ժամանակ մի քանի հարիւր երեխաների երթը դիմեց դէպի բանաստեղծի արձանը։ Այդ ժամանակ Պէդրօ հրապարակի վրա պայթեց մի ռումբ։ Մի քանի մարդ վիրաւորվեցին, մինը սպանվեց։ Գրգռված ազգաբնակութիւնը ոչնչացրեց հրապարակի վրայի քիօսքը, ուր ժողովվում էին անիշխանականները։ Մի քանի հոգի կալանաւորվեցին։

—

Կահիրէ.—Նախկին մեծ վէզիր Քեամիլ-փաշան նորից մեկնեց Աղեքսանդրիայից Կիպրոս։

—

Կօպէնհագէն.—Առաւօտը ժամանեց նորվէգիական թագաւորական զոյգը գահաժառանգ պրինցի ուղեկցութեամբ։ Բարձր հիւրերը ընդունվեցին կայարանում դանիական թագաւորական զոյգից և թագաւորական տան անդամներից։

—

Սօֆիա.—Բուլգարական կառավարութեան հաղորդագրութեան համաձայն, բոլոր փարոսները Սև-ծովի բալկանեան ծովափում սկսեցին գործել, բացի Էմինի, Իռիադի և ս. Անաստասի կղզու վրա գտնվողներից, որոնք տակաւին վերանորոգված չեն։ Միաժամանակ բուլգար կառավարութիւնը կարգադրել է հեռացնել ստորջրեայ ականները Սև-ծովի բուլգարական նաւահանգիստներում և բանալ այդ նաւահանգիստները միջազգային առևտրի համար։ Այսուհետև մինչև ականները հեռացնելը նաւերի մուտքը Վառնայի և Բուրգասի նաւահանգիստները կարող է կատարվել միայն նաւավարների հետ։

—

Մադրիդ.—Ռօմանօնէսի կաբինէտը հրաժարական տուեց։ Պալատները այդ առիթով զբաղմունքները դադարեցրին։

ՄԵԾ ՎԵԶԻՐԸ ՍՊԱՆՎԱԾ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

29 մայիսի

Կ. Պօլիս.—Սպանվեց մեծ վէզիր Մահմուդ-Շէվքէթ-փաշան։

Մեծ վէզիրը սպանվեց կէսօրին Բ. Դուռը գնալու ժամանակ։ Երկու զինված մարդ մօտեցան մեծ վէզիրի աւտօմօբիլին և գնդակահարեցին նրան։ Լուրերի համաձայն՝ ոճիրը հետևանք է «Մ. և Ա.» կոմիտէի դէմ կազմված դաւադրութեան։

Մահափորձը կատարվեց ժ. $11^{1}/_{2}$-ին։ Մահմուդ-Շէվքէթ-փաշան աւտօմօբիլով գնում էր զինուորական մինիստրութիւնից իր երկու ադիւտանտների հետ։ Բայազիտի շատրվանի մօտ նրա աւտօմօբիլի առաջը կտրեցին երկու հոգի, որոնք կանգնած էին ուրիշ աւտօմօբիլի առաջ։ Այդ անձինք կրակեցին ատրճանակներից։ Վիրաւորվելով մահացու կերպով, Մահմուդ-Շէվքէթ-փաշան շուտով վախճանվեց։ Սպանվեցին նաև նրա ադիւտանտը, վիրաւորվեց սպասաւորը։

Արտաքին գործերի մինիստր պրինց Հալիմ-Սաիդ-փաշան նշանակվեց մեծ վէզիրի ժամանակաւոր պաշտօնակատար։

Սուլթանը իր հրովարտակի մէջ ցաւակցութիւն է յայտնում Մահմուդ-Շէվքէթ-փաշայի սպանման առիթով և հրամայում է նոր վէզիրին վարել գործերը ներկայ մինիստրների հետ։

Երեկոյեան ժամը 10-ից յետոյ արգելված է փողոց ելնել։

—

Կ. Պօլիս.—Մի քանի օր առաջ 30 քաղաքացիական և զինուորական անձինք գումարվեցին գաղտնի խորհրդակցութեան Օկ-մէյդանում մի տան մէջ, որպէսզի քննեն կառավարութիւնը տապալելու միջոցները։ Ոստիկանութիւնը կալանաւորեց 15 մարդու, որոնց թւումն է ընդհանուր ոստիկանութեան քաղաքական բաժնի նախկին կառավարիչը։ Զինուորական նահանգապետը և ոստիկանութիւնը որոնում են ուրիշների՝ և տներում թագցված ռումբերը։ Լութֆի-բէյը դաւադրութեանը մասնակցելուն համար դատապարտվեց ցմահ տաժանակիր աշխատանքների։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 75-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Շուշի, 15 մայիսի

Ղարաբաղի թեմ. դպրոցի 75-ամեայ յօբելեանը, անկասկած, մի ազնուագոյն տօնախմբութիւն է՝ նուիրված այնպիսի հաստատութեան, որ տասնեակ տարիների ընթացքում տուել է իր սաներին հոգեկան, մտաւոր և բարոյական զարգացում, որ ներշնչել է նրանց մէջ սէր դէպի մայրենի լեզուն և գրականութիւնը։

Չը պէտք է մոռանալ, որ այդպիսի կուլտուրական [illegible] պատահում մեր իրականութեան մէջ և որ նրանք իրանց էութեամբ թելադրում են մեր հասարակութեանը հրամայողական պարտաւորութիւններ, որի նշանակութիւնը պէտք է ընդգծված լինի ուժգին շեշտերով։

Հայ դպրոցը տօնում է 75-ամեայ յօբելեան, որ կուլտուրականութեան մի վկայական է այն ժողովրդի համար, որի շրջանում նա կատարվում է, բայց այդ դպրոցը մինչև այժմ գտնվում է անապահով, տատանվող, երերուն վիճակի մէջ...

Մի հասարակութիւն, որ ուզում է ապրել, անպայման պէտք է երբէք թոյլ չը տայ, որ վտանգված մնան այն գործօնները, որոնցից կախված է նրա զարգացման ապահովութիւնը։ Մատնելով իրան անտարբերութեան, հասարակութիւնը միևնոյն է թէ դագաղ է պատրաստում իր համար և իր տխուր վախճանի դատապարտութիւնն է կատարում...

Շնորհիւ իր անապահով, երերուն դրութեան, Ղարաբաղի թեմական դպրոցը չէ կարողանում կատարել իր կրթական-կուլտուրական դերը լայն ծաւալով և խորութեամբ, որպէս զի նրա բարոյական ազդեցութիւնը խորապէս զգացվի մեր հասարակութեան կեանքի մէջ։ Իսկ երբ մենք կը դնենք դպրոցական գործը ամուր հիմքերի վրա, երբ նրան կօժտենք բոլոր այն ուժերով և պարագաներով, որոնք անհրաժեշտ են նրա կանօնաւոր ապահովութեան համար, այն ժամանակ մենք կը սկսենք վայելել նրա կուլտուրական պտուղները և նրա բարոյական օգուտները աւելի լայն չափերով։

Մի փախչէք ձեր բարոյական պարտաւորութիւնների կատարումից, իրագործեցէք ձեր խոստումները և տենչանքները, խմբվեցէք կուլտուրական տօնի շուրջը և միացած ուժերով գործակցեցէք ստեղծելու Ղարաբաղի թեմ. դպրոցի համար այնպիսի պայմաններ, որ նա կատարելագոյն կերպով ընդունակ լինի ծառայելու իր վեհ գաղափարական կոչման։ Այդ է պահանջում ուղիղ լօգիկան, այդ է պահանջում [illegible] մի ժողովրդի, որի ապագան շատ մեծ կախումն ունի կուլտուրական իր առաջադիմութիւնից։

Պօղ. Զաքարեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Մայիսի 27-ի և 28-ի նիստերում տեղի է ունեցել արդարադատութեան մինիստրութեան նախահաշուի քննութեան շարունակութիւնը։

Առաջ ենք բերում այն կտորները, որոնք հետաքրքրութիւն են ներկայացնում մեզ համար։

Անտօնովը զեկուցանում է Դումայի արդարադատութեան մինիստրութեան նախահաշիւը 52,273,961 րուբլի քանակով։

Պատգամաւոր Մակլակօվը մի երկար ճառով մանրամասն վերլուծման ու գնահատման ենթարկելով ներկայ ընդհանուր քաղաքական դրութիւնը Ռուսաստանում՝ ասում է, որ ներկայ մօմէնտի ամենաբնորոշ գիծը կազմում է կառավարութեան ու Դումայի հիմնական տեսակէտների սկզբունքային տրամագծական հակառակութիւնը. կառավարութիւնը պետական նոր կազմին, հոկտ. 17-ի մանիֆեստով աւետված, բոլորովին հակառակ կերպով է ընթանում, բացարձակօրէն քանդում է նոր կազմի հիմքերը. այդ պայմանների մէջ ու իր այդ գործելակերպով կառավարութիւնը չէ կարող Դումայի աշխատակիցը լինել։ Դումայի [illegible] կառավարութեան հետ ընդհարվելուց։ Դումայի հինգամեայ գիջողութիւնը կառավարչական շրջաններում վերացրեց օրինաչափութեան ու օրինապահութեան զգացմունքներն ու հասկացողութիւնները նոյնիսկ։ Ազգաբնակութեան մէջ իսպառ կորել է հաւատը դէպի դատարաններն ու նրանց դատավճիռները։ Ոչ ոք չէ մեղադրում դատաւորներին կաշառակերութեան ու անփութութեան մէջ. նրանց մեղադրում են այն բանում, որ ինքնուրոյն չեն. կորած է հաւատը դէպի այն, որ դատավճիռը արդիւնք է, ինչպէս որ նա պէտք է լինի միշտ, ու անկախ խօսք դատաւորի խղճի, բղխած միմիայն նրա խորքից։ Դատաւորները ազդեցութեան են ենթարկվում նոյնիսկ զուտ քաղաքացիական դատեր ու վէճեր քննելիս (ծափ. ձախից)։

Ռուս արդարադատութեան արդի տխուր վիճակը մեր պետական կառավարութեան ընդհանուր պայմանների անմիջական հետևանքն է հանդիսանում։ Ռուսաստանում վերահաստատվեց խաղաղութիւնը, հանդարտվեց, ընկճվեց յեղափոխութիւնը։ Բարեմիտ, լաւ ու միանգամայն խելացի իշխանութիւնը իր համար այդպիսի նպաստաւոր պայմանների շնորհիւ կարող էր շատ բան անել յօգուտ երկրի, կարող էր հաստատուն դարձնել հոկտ. 17-ի մանիֆէստով աւետված նոր կազմը։ Մեր ռէակցիան չըմբռնեց այդ ու իսպառ զուրկ մնաց պետական իմաստութիւնից։ Արդարադատութեան մինիստրութիւնը մոռանում է այն, որ անհաստատուն դարձնելով դատաւորների անկախութիւնը՝ նա կործանման վտանգի է ենթարկում դատարանի էութիւնը, որն է արդարադատութիւնը, իսկ առանց վերջինիս ոչ մի պետութիւն չէ կարող գոյութիւն ունենալ. մինիստրութիւնը կռիւ է մղում նոյնիսկ սենատի դէմ, որը բաղկացած է խոր պահպանողական աշխարհահայեացքի տէր բարձրագոյն պաշտօնեաներից։ Կառավարութեան այդպիսի ընթացքը կարող է տանել նրան դէպի այնպիսի դժուարին դրութիւն, երբ նա ստիպված կը լինի դիմել երկրին ու նրա բազմամիլիօն ազգաբնակութեան համակրութիւնը հայցել. բայց նա չէ կարող ասել մեզ հիմա, թէ երկիրն այն ժամանակ կը գնայ նրա ետևից (ծափ. ձախից ու կենտրոնի մի մասում)։

Չխենկելին ասում է (մայիսի 27-ի նիստում), թէ դատարանը հիմա մեզանում ներկայացնում է իրանից մի պարզ ու բիրտ միջոց ունեւոր խաւերի ձեռքին՝ իշխելու համար չունևորների վրա։ Ռուսաստանը զուրկ է իսկական արդարադատ դատարաններից, նոյն իսկ այնպիսիից, որտեղ օրէնքն իր ամբողջ ծաւալով գործադրվում է երբեմնակի խորև բացառութիւն գտնէ։

28-ի նիստում, որին նախագահում է Ռօդզեանկօն, Չխենկելին, շարունակելով իր ճառը, որն ընդհանուր առմամբ տևում է երկու ժամ, ասում է. սենատը յաճախակի հակասում է ինքն իրան իր բացատրութիւնների մէջ մերթ լայնացնելով գործող օրէնքների շրջանակը, մերթ բոլորովին բացասելով այդ օրէնքների գործադրութիւնը։ Ծայրագաւառներում դատարանը աւելի անկատար է, աւելի վատթար վիճակի մէջ. այնտեղ իսկական դատաւորները թարգմանիչներն են, քանի որ ազգաբնակութեան ստուար մեծամասնութիւնը չէ տիրապետում ռուսաց լեզուին։ Ռուսական դատարանը առանձնակի թշնամութիւն է տածում դէպի տեղական ազգութիւնները, Կովկասում մանաւանդ (ծափահար. ձախից)։

Մինիստրների օթեակն է մտնում արդարադատութեան մինիստր Շչեգլօվիտօվը։

Կերենսկին երկար քննադատում է արդի դատավարութեան ձևական ու հանուր տեխնիքական թերութիւնները և վերջում ասում, թէ բացի ուժեղներին հաճոյանալու տենչից՝ սենատի գործելակերպի ու որոշումների մէջ ուրիշ չափ չէ նկատվում. սենատը այնպիսի դատավարութեան ղեկավարն է հիմա, որն ամեն քայլափոխում օրինակներ է տալիս այն բանի, թէ ինչպէս պէտք է աղաւաղել ու այլանդակել օրէնքը։ Ինչպէս են տանում նախնական քննութիւնները, այդ լաւ բնորոշվում է Լըժինի դէպքով, նրա յայտնի սխրագործութիւններով, տխրահռչակ Լըժինի, որը բացառութիւն չէ կազմում, միակը չէ հանդիսանում տարաբաղդաբար։ Կարելի է մի շարք վայրեր մատնանշել Ռուսաստանում, որտեղ դատական գործերը քննադատվում են ու վճռվում կեղծած տուեալների հիման վրա (երկարատև ծափահար. ձախից)։

Եփրեմօվն ասում է, որ ռուս պետութեան բազմամիլիօն ազգաբնակութեան իրաւունքները յանձնված են ոստիկան-վարչական իշխանութեան բարեհայեցողութեանն ու այդ իշխանութեան ոգով գործող դատարանին։ 60-ական թւականներին կառուցված արդարադատական փարոսի լոյսը պակասել է սկսում 80-ական թւականներից ու այժմ սպառնում է իր կատարեալ չքացմամբ։ Թէ այդ և թէ ուրիշ տեսակի լոյսեր կը ցոլան ու կը փայլեն միշտ այն ժամանակ միայն, երբ մեր մինիստրներն ու կառավարութիւնն իր ամբողջ կազմով պատասխանատու դառնան ժողովրդական ներկայացուցչութեան առաջ (ծափահար. ձախից)։

Արդարադատութեան մինիստրը մի առ մի առարկում է նախընթաց հռետորներին, որոնց ասածների մէջ նա, ըստ իր, զուր է ճշմարտութիւն փնտռում։ Աջակողմեաններն ու ազգայնականները յաճախակի ընդհատում են նրա ճառը ծափահարութիւններով։

«Դէպի արդարադատութեան մինիստրը կարելի է յարգանք ցոյց չը տալ. այդ ձեր գործն է,—ասում է մինիստրը.—բայց չէ կարելի նոյն վերաբերմունքը ցոյց տալ դէպի դատարանը, որն անբիծ է»։ Լըժինի մասին մինիստրն ասում է. «Բոլորովին մտացածին է ու սուտ այն պնդումը, թէ ինձ յայտնի են եղել Լըժինի կեղծումները. հէնց որ ինձ յայտնի դարձան Լըժինի մասին սենատում ծագած կասկածները, ես իսկոյն նրան առաջարկեցի հրաժարական տալ անյապաղ. Լըժինն իսկոյն և եթ կատարեց այդ հրամանը։ Այն պնդումների առիթով, թէ երբ Դաշնակցութեան գործով անմեղ դատապարտվածները շարունակում են կրել իրանց պատիժները, պարտք եմ համարում ասել, որ մեղադրվող 146 հոգուց արդարացվել են 94 հոգի. մնացածները դատապարտվել են իրանց սեփական ցուցմունքների հիման վրա. վեց հոգի անկեղծօրէն խոստովանել են իրանց պատկանելութիւնը այն կուսակցութեան, որը ձեռնարկել էր Հայաստանի բռնի անջատումը Ռուսաստանից. դատապարտվել են նաև վկաների բերանացի ցուցմունքների հիման վրա, նիւթական ապացոյցների ու իրանցից՝ մեղադրվողներից ընդունված սեփական փաստաթղթերի հիման վրա ևս։ Եթէ կան Դաշնակցութեան գործով անմեղ դատապարտվածներ, ինչո՞ւ մինչև այժմս ոչ մի միջնորդութիւն չէ անվում գործի վերաքննութեան մասին։ Պաշտպանների թւում եղել են նաև Կերենսկին ու Մակլակօվը. նրանք, պնդելով որ դատապարտված են անմեղներ, չեն կատարում սակայն իրանց պարտքը, այն է՝ գործի վերաքննութեան մասին միջնորդութիւն չեն յարուցանում» (ծափահարութիւն աջակողմեանների, ազգայնականների ու կենտրոնի մի մասում)։

Յետոյ մինիստրը շարունակում է Մակլակօվի հասցէին ուղղած իր առարկութիւնները, յաճախակի խրախուսվելով աջակողմեանների ու ազգայնականների ծափահարութիւններով։

Զամիսլօվսկին ևս քննադատում է Մակլակօվի ճառն ու պաշտպանում արդարադատութեան մինիստրի քաղաքականութիւնը, ընդգծելով նրա փրկարարութիւնը Ռուսաստանի համար։

Պարչևսկին նկարագրում է դատարանի ու դատավարութեան առանձնայատուկ թերութիւնները Լեհաստանում, որտեղ անարդարադատ մթնոլորտը հեղձուցիչ է անչափ։

[illegible] ասում է, թէ թէև քննիչ Լըժինը հիւանդ է ճանաչված, բայց նրա հի-

---

Ինքը դասախօսը դարձեալ ընդգծում է իր յոռետես վերաբերմունքը հայկական բարենորոգումների մասին։ Եթէ Ռուսաստանը չը միջամտէ, Թիւրքահայը կորած է։ Հայերը այժմեանից իսկ գործելու են այս ուղղութեամբ.

1) Պէտք է հաշտեցնել, միաբանեցնել Թիւրքիայում գործող հայկական կուսակցութիւնները ոչ թէ սին խօսքով, այլ իրապէս, րէալ կերպով։ Պէտք չէ որ պատմական այս ծանր րօպէին նրանք սառնասիրտ մնան և չը հաշտվեն միմեանց հետ։ Դրա հետ միասին պէտք է ստեղծել ինտելիգենտ գործող ուժեր։

2) Թիւրքահայերին անհրաժեշտ է ինքնակառավարում (հասկացվում է և ինքնապաշտպանութիւն)։ Գուցէ այժմ Ռուսաստանը Լօբանօվ-Ռօստօվսկու սխալը չը գործէ և մասսայական հայկական ջարդեր առաջ չը գան, սակայն վտանգը սիստեմատիկ կոտորածների մէջ է։ Ընդ սմին կովկասահայերի պարտականութիւնն է համոզել ռուսաց կառավարութեանը թէ թիւրքահայկական էկզցէսներից չը պէտք է երկիւղ կրել։ Ռուսաստանը ապահովելու է հայի կեանքն ու գոյքը։

3) Դպրոցների ցանցով ծածկել հայկական նահանգները, ուր ազգաբնակութիւնը ծարաւի է ուսման, բայց դրամ չունի դպրոցներ բանալու։

Նկարագրելով դպրոցական անմխիթար վիճակը, Օլգենինը նկատում է, որ ներկայումս գրագիտութիւն տարածելու գործը յանձն է առել միայն Միացեալ Ընկերութիւնը։ Սակայն «մի ծաղկով գարուն չի գայ»։

Այնուհետև դասախօսը պատմեց թիւրքահայ կնոջ իրաւազուրկ դրութիւնը, բերելով յայտնի օրինակներ։

Իր դասախօսութեան եզրակացութեան միջոցին Օլգենինը վերադարձաւ այն վերաբերմունքին, որ ունենալու է Ռուսաստանը դէպի հայկական հարցը։

Ներկայ քաղաքական դրութիւնը ստիպում է Ռուսաստանին ուշի ուշով հետևել հայկական հարցի զարգացմանը։ Դեռ գեներալ Պասկևիչը, ապա և գեն. Լազարեանը կողմնակից էղան ռուսական ակտիւ քաղաքականութեան Փոքր-Ասիայում, մասնաւորապէս Հայաստանում և Քիւրդստանում։ Վերջերս, երբ յայտնի շէյխ Աբդուլլահը գրաւեց Ուրմին և առաջարկեց իր ծառայութիւնները Ռուսաստանին, այն ժամանակվայ ռուս քաղաքագէտները, դժբաղդաբար, կարճամտութեամբ մերժեցին, պատճառաբանելով թէ Ռուսաստանին անպատուաբեր է գործ ունենալ մի աւազակապետի հետ... Սակայն նոյն աւազակապետից չը խորշեցին հեռատես անգլիացիք իրանց քաղաքական նպատակները Թիւրքիայում իրագործելու համար։

Ասպարէզի վրա դնելով քիւրդական հարցը, Ռուսաստանը լուծում է հայկական հարցը։ Ռուսաց կառավարութիւնը պէտք է մօրալ աջակցութիւն ցոյց տայ քիւրդական շարժմանը։ «Եթէ մենք օգնեցինք,—ասում է դասախօսը,—օրինակ Մօնղօլիային, ինչո՞ւ չը պէտք է հանդէս գանք քիւրդական հարցում։ Մենք այդպիսով հնարաւորութիւն կը տանք Թիւրքահային ազատ շնչել։ Հայերի վտանգը իրօք քիւրդերից չէ, այլ թիւրքաց կառավարութեան պրօվօկացիօն գործելակերպից։

— Ես իմ աչքով ականատես եղայ,—շեշտում է Օլգենինը,—այն կործանարար պրօպագանդային, որ թիւրք գործակալները մղում են ընդդէմ Ռուսաստանի։ Մենք պարտաւոր ենք ակտիւ հանդէս գալ մեր շահերը պաշտպանելու համար։ Գուցէ հնար լինի Հայաստանին տալ աւտօնօմիայի նման մի կազմակերպութիւն եւրօպական վերահսկողութեան տակ։ Եթէ կիսավայրենի Ալբանիային աւտօնօմիա է տրվում Աւստրիայի աջակցութեամբ, ինչո՞ւ չը տրվի Հայաստանին ևս, որ սահմանակից է Ռուսաստանին։ Մենք այդպիսով հետևում ենք սոսկ ինքնապաշտպանութեան միջոցի։ Հայ տարրը իր աշխատասիրութեամբ մեծապէս օգտակար կը լինի Ռուսաստանին, ինչպէս պատմութիւնը մեզ ցոյց է տալիս։ Մեր պարտքն է փրկել թիւրքահայ մնացորդ մասերին իսպառ կորչելու վտանգից։ Իւրաքանչիւր օրը ունի իր նշանակութիւնը։ Թիւրքահայերը ապագայում նպաստելու են ռուսական ազդեցութեան զարգացմանը Փոքր Ասիայում։ Այսօր, երիտասարդ-թիւրքերի դժոխային երկրում անհետացող թիւրքահայը՝ հիւանդ հոգեպէս, հիւանդ մարմնապէս (Օլգենինի ասելով տասնեակ հայկական գիւղեր վարակված են զանազան տարափոխիկ հիւանդութիւններով) իր վերջին յոյսը, ակնկալութիւնը Ռուսաստանից է սպասում և ռուս գործչի գրածի նման ասում է՝

— Батько, гдѣ ты? Слышишь-ли ты все это? Գալիս ես...

Ու լսելու է Ռուսաստանի ձայնը՝

— Գալիս եմ...

Դասախօսը արժանացաւ ուժգին ծափահարութիւնների և օվացիաների։

Ունկնդիրները ժամը 12-ին, ծանր տպաւորութեան տակ ցրվեցին իրանց տները։

Ե.

Ց. Գ.—Վրիպակ. «Մշակի» երէկվայ համարում իմ յօդուածի մէջ տպված է. «Օլգենինը հակված է առանձին նշանակութիւն տալու Թիւրքահայաստանում կատարվող սովորական յանցագործութիւններին»։ Պէտք է լինէր «հակված չէ»։ Բացի դրանից մի տեղում փոխանակ ագրարային բանկ խօսքի, շարված է «բանակ»։

Ե.

ւանդութեան հետեւանքները լիկվիդացիայի չեն ենթարկված. Նրա զոհերը տառապում են կատորգայում ու Սիբիրում: Մինիստրը խօսում է Դաշնակցութեան գործի վերաքննութեան մասին, լաւ իմանալով որ ձեւական տեսակէտից հազիւ թէ վերաքննութեան համար հիմքեր գտնվեն:

Պապաջանեանը կանգ է առնում դատաբանի գործունէութեան վրա Կովկասում ու մանրամասօրէն նկարագրում է Թիֆլիսի դատաստանական պալատի նախագահ Լազօդայի գործունէութիւնը. առանձնապէս ընդգծում է նրա հալածանքները՝ ուղղված մամուլի դէմ ու տեղական՝ բնիկ կովկասցի փաստաբանների դէմ: Լազօդան շարունակում է իր բացասական գործունէութիւնը,—ասում է հռետորը,—և այդ՝ չը նայած այն բանին նոյն իսկ, որ սենատը քանիցս անգամ բեկանել է նրա ջանքերով կայացած վճիռները:

Նօվիցկին շատ կտրուկ ոճով առարկում է Աջէմեանին ու Մակլակօվին և փառաբանում արդարադատութեան մինիստրի գործունէութիւնը:

Զեկուցանող Անտօնովի ճառից յետոյ [illegible] արդարադատութեան մինիստրութեան նախահաշւի մասին վերջացած են յայտարարվում: Դուման ձայների մեծամասնութեամբ որոշում է անցնել նախահաշւի քննադատութեանը յօդուած առ յօդուած:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Քութայիսում կայացաւ այս օրերս ազնուականների ժողով՝ ընտրելու նահանգական պարագլուխ: Համագումարը ուղարկեց ամենահպատակ հեռագիր, որին և ստացվեց շնորհակալական պատասխան Նորին Մեծութեան կողմից: Նահանգական պարագլուխ ընտրված է իշխան Նիժարաձէն:

◆ Մայիսի 28-ին, Բաթումում, Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցօվ-Դաշկօվ իր կնոջ հետ փակ աւտօմօբիլով զբօսանք է կատարել մինչև Զելեօնի-մըս կոչված տեղը և վերադարձել:

◆ Նաւթարդիւնաբերողների համագումարի կողմից այն մասնաժողովի համար, որ զբաղվելու է Թիֆլիսի պօլիտեխնիկումի տեղի խնդրով, նշանակված է ինժեներ Լեոն Ղուլեանը:

◆ 10,000 ռուբլի է յատկացված կառավարութեան կողմից յանձնելու Կայսեր. Կովկ. Տնայնագործական Կօմիտէտին այս տարի ծախքեր կատարելու համար:

◆ Զայնաւոր Ս. Սուլխանեանը հրաժարվել է քաղաքային դումայական վերստուգիչ յանձնաժողովի անդամութիւնից:

◆ Երկրագործութեան գլխ. կառավարչի կովկասեան լիազօր Շաշկօվսկին մեկնեց Սև ծովի ափը:

◆ Թիֆլիսում տաք եղանակներն արդէն սկսվում են աստիճանաբար:

◆ Յունիսի 1-ից բոլոր հասարակական և կառավարական հաստատութիւններում աշխատանքները կը տևեն մինչև ցերեկվայ ժամը 2-ը:

◆ Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում վերջերս բացվեց ինչ-որ ակումբ «Տուրիստների կլուբ» անունով Թիֆլիսի ժողովարանի ամառային նախկին շինութեան մէջ: Շուտով այդ ակումբը իր արտաքին փայլով ու նորութեամբ գրաւեց մեծ թւով յաճախորդներ: Բայց շուտով հասարակութեան մէջ շշուկներ շրջեցին, թէ յիշեալ ակումբի ներսում կատարվում են ոչ այնքան սովորական ակումբներին յատուկ բաներ: Այնտեղ բուն էին դրել ազարտ խաղեր և à la կաֆէ-շանտանային ներկայացումներ: Հասկանալի է, որ իշխանութիւնը չէր կարող սառնասիրտ մնալ դէպի այդ աննօրմալ երևոյթը, և այժմ Թիֆլիսի նահանգապետը կարգադրել է փակել անմիջապէս «Տուրիստների կլուբը»:

◆ Երէկ փակվեց ամառվայ ընթացքում Ժողովրդական Տանը ռուս ներկայացումներ կազմակերպող սեկցիայի գործունէութիւնը:

◆ Վերջին ժամանակներս եկած կարկուտը փչացրել է Գօրու գաւառի այգիների մի մասը: Վնասվել են նաև Ղազախի գաւառի այգիները: Քութայիսի նահանգի մի քանի տեղերում տուժել են խաղողի որթերը:

◆ Այրի Օրլօվսկայան դիմել է նահանգապետին, խնդրելով թոյլատրել հրատարակել մի շաբաթաթերթ «Тифлисская Молва» անունով:

◆ Կիրակի, մայիսի 2-ին, երեկոյեան ժամը 5-ին Դիդուբէում տեղի կունենայ Վ. Ս. Քէբուրօվի թռիչքը աէրօպլանով:

◆ Ներկայումս Էսէնտուկիում ընդհանուրի ուշադրութեան առարկայ է դարձած յայտնի գեղեցկուհի Տարնօվսկայան, որ դատվեց իտալական դատարանում և կրեց իր պատիժը սպանութեան համար:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Տան թատրօնում

Տիկ. Ցամիկի բենեֆիսին, մայիսի 29-ին, Ժողովրդական Տան թատրօնը, չը նայած լի օրվան, համարեա լի էր: Դա պէտք է վերագրել թատրօնասէր հասարակութեան դէպի դերասանուհին տածած յարգանքին: Արդարև, տ. Ցամիկ օժտված է համեստ դերասանուհու ձիրքով, բարեխղճօրէն առաջ է տանում իր յանձն առած ծանր խաչը: Բացի Ժողովրդական Տնից տիկինը մասնակցում է հայոց դրամատիկական խմբի ներկայացումներին Արտիստական թատրօնում: Այդ օրը ներկայացվեց առաջին անգամ «Կովկասեան գիշերներ» դրամ. էտիւդը հեղ. Գէյի, թարգմ. Սալիմեանի: Դա իսկապէս մօնօլօգ էր և առանց գործողութեան: Ապա խաղացվեց «Պարիզի շըշմոլիկ տղայ» 2 գործող. կօմէդիան, որի մէջ բենեֆիցիանտուհին կատարեց Ժօզէֆի դերը, պէտք է ասած, բաւական աջող: Խաղացվեց նոյնպէս մի վօդէվիլ՝ «Ընտանեկան փոթորիկ»: Տիկին Ցամիկ բուռն ծափահարութիւնների հետ ստացաւ մի քանի համեստ ընծաներ: Տ.

—

Յունական ներկայացումն

Մայիսի 27-ին, Թիֆլիսի յունաց դրամատիկ ընկերութիւնը Ժողովրդական Տանը մասնակցութեամբ Աթէնքից Թիֆ- [illegible] Վ. Արգիրօպուլօյի «Կ. Պօլսի պատրիարք Գրիգորը» 3 գործ. պատմական ողբերգութիւնը և «Միկրօ Պանդրէմէնի» 1 գործ. կատակերգութիւնը: Ողբերգութեան սիւժէն վերցված է յոյն իրականութեան այն ժամանակաշրջանից, երբ այդ կուլտուրական ազգը գտնվում էր թիւրք բարբարոս տարրի հալածանքների և բռնութիւնների ներքոյ և ենթակայ էր ամեն կարգի արհաւիրքների:

Ահա այդպիսի մի շրջանում յոյն ազգը իր միջից ծնում է մի ըստ ամենայնի արժանաւոր զաւակ, պատրիարք Գրիգորին, որը իր սեփական կեանքը վտանգի ենթարկելով, մահն աչքն առած, բողոքում է ժամանակակից բռնակալ վէզիր Վէնդերլիկի անօրէնութեանց և բռնութեանց դէմ, որի վախճանը լինում է այն, որ ինչպէս նրան, նոյնպէս և շատ ուրիշներին կախում, կոտորում, լլկում են...

Յիշեալ ողբերգութիւնը բեմական տեսակէտից բաւական լաւ մի արտադրութիւն է և պարունակում է իր մէջ էֆէկտաւոր տեղեր: Նկատելի է, որ Արգիրօպուլօն տաղանդաւոր դերասան լինելուց յետոյ, միաժամանակ և հմուտ դրամատուրգ է:

Իշխան Մուրուզիսի և պատրիարք Գրիգորի դերերը Վ. Արգիրօպուլօ կատարեց փայլուն կերպով, արժանանալով աղմկալից ծափերի: Ա. Սանդրին պատկերացրեց շատ տիպիկ կերպով բռնակալ Վէնդերլիկի տիպը: Տիկ. Աստիօտասսօն. տ. տ. Ի. Միխայլիդին, Սօֆիանիցին, Կէխայասը և Լազարօսը նըպաստեցին անսամբլի պահպանման:

Վերջում միանգամայն աջող և կենդանի կերպով խաղացվեց վերևում յիշված կատակերգութիւնը, որի մէջ փայլեցին տ. Պ. Սանդրիսը և Ա. Սանդրին:

Վ. Արգիրօպուլօյի խումբը մտադիր է ներկայացումներ կազմակերպել Ալլահվերդիում, Կարսում, Ալէքսանդրօպօլում և առհասարակ Կովկասի այն բոլոր վայրերում, ուր ապրում են յոյներ:

Կատարեալ աջողութիւն ենք մաղթում:

Hellene

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պէրա (Կ. Պօլիս), 5 յունիս (ն. տ.)

Կը փութամ իմ անկեղծ շնորհակալութիւններս յայտնել «Մշակի» յարգելի խմբագրութեան, որ բարեհաճած էր յօբելեանիս առթիւ գրել հրապարակային շնորհաւորութիւններ: Բժ. Հ. Պ. Մատթէոսեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մոսկվայում ժողովված ազնուականութեան պարագլուխները մտադիր են միջնորդել Թագաւոր Կայսրի առաջ Պետական Դուման արձակելու մասին: Նրանք պատրաստած ունէին նոյնիսկ համապատասխան ուղերձ, բայց վերջին րօպէին նրանք հրաժարվեցին ուղերձը ներկայացնելուց, որովհետև նրանցից ոչ մէկը չը գտնվեց, որ կամենար դառնալ պրեմիէր և իրագործել նախագիծը: Այդ պատճառով վճռվեց սպասել աւելի յարմար րօպէի և մինչ այդ հող պատրաստել:

◆ Կ. Պօլսում դրութիւնը աննախանձելի է: Երիտասարդ-թիւրքերը գլուխները կորցրել են և միջոցների մէջ խտրութիւն չեն դնում իրանց հակառակորդներին տապալելու: Նրանք որոշել են չը քաշվել և կալանաւորել Չաթալջայի զօրքերի ընդհանուր հրամանատար Աբիւք-փաշային և Ադրիանուպօլսի պաշտպանութեան գործում հերոս հռչակված Շիւքրի-փաշային: Բացի դրանից երիտասարդ-թիւրքերը կազմակերպում են Կ. Պօլսի մէջ 10,000 երիտասարդներից հաւատարիմ զօրագունդ իրանց պաշտպանութեան համար:

◆ Կ. Պօլսում օպպօզիցիան իր հերթին ակտիվ գործում է: Որոշում կայ տապալել Մահմէդ սուլթանին, որ խաղալիք է դարձել երիտասարդ-թիւրքերի ձեռքում, և գահ բարձրացնել օպպօզիցիայի պաշտպանող գահաժառանգ Իւսիւֆ-Էզդինին: Ահեղ դէպքերի ուրուականը կանգնած է իսլամի մայրաքաղաքի գլխին:

◆ Չաթալջայի դիրքերում գտնվող թիւրք զօրքերի մէջ կրկին մուտք գործեց քաղցը, որ կարող է ապստամբութիւն ստեղծել:

◆ «Н. В.»-ն տեղեկացնում է, որ Ռուսաստանը ամենակտրուկ կերպով նախազգուշացրեց Սերբիային և Բուլգարիային՝ չը դիմել եղբայրասպան պատերազմի:

◆ Սալօնիկից հեռագրում են Վիէննա, որ բալկանեան պրեմիէրների տեսակցութիւնը տեղի կունենայ հաւանօրէն Իտալիայում:

◆ Սերբ լիազօրները Լօնդօնից յետ կանչվեցին Սօֆիա: Դրութիւնը չափազանց վտանգաւոր է: Մթնոլորտից արեան հոտ է փչում:

◆ Ռումինական կառավարութիւնը շտապով ռազմի պատրաստութիւններ է ձեռնարկել:

◆ Պարիզ անձնասպան եղաւ յայտնի նկարիչ իւմօրիստ Շարլին:

◆ Անգլիական տեղեկութիւնների համաձայն, Եապօնիան և Գերմանիան գաղտնի համաձայնութիւն են կապել Հարաւային և Հիւսիսային Ամերիկան եապօնացի բանւորներով լցնելու մասին:

◆ Լօնդօնում սուֆրաժիստուհիները իրանց «խաչագողութիւնները» մեծ եռանդով շարունակում են: Կառավարութիւնը չը գիտէ ինչպէս վարվէ ռազմի ամբաձգուհիների և հրկիզուհիների հետ:

◆ Յունիսին Պետերբուրգ է գնալու պարսից պետական խնամակալը:

◆ Տխրահռչակ ռոտմիստր Տրեշչէնկօյի՝ Լէնայի բանւորներին գնդակահարողի՝ գործը առ ընդմիշտ դադարեցվեց: Նա ստանալու է ամբողջ ռոճիկը:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

29 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բացվեց Պիրագօվեան համագումարը պրոֆ. Սիրոտինինի ողջոյնի ճառով: Եկել են մօտ 1000 պատգամաւոր:

Ցերեկով «Աստորիա» հիւրանոցում տրվեց թէյ ի պատիւ իտալացի պատգամաւորութեան, որին ողջունեց Տիմիրեազեվը: Հիւրերը այցելեցին մինիստրների խորհրդի նախագահին, արտաքին, ներքին գործերի, առևտրի, ճան. հաղորդակցութեան մինիստրներին և քաղաքագլխին: Խնճոյք տեղի ունեցաւ նաև իտալական դեսպանի մօտ: Ներկայ էին արտաքին գործերի, առևտրի մինիստրները, երկր. գլխ. կառավարիչը, Պետական Դումայի նախագահը, Պետական Խորհրդի անդամները:

Գրաւվեցին «Правда»-ի և «Лучъ»-ի համարները:

ՄՕՍԿՎԱ: Փակվեց հնագիտական համագումարը:

ԿԻԵՎ: Հանդէսով բացվեց համառուսական գործարանա-ֆաբրիկային, առևտրա-արդիւնաբերական, գիւղատնտեսական և ուսումնական - գեղարուեստական ցուցահանդէսը: Ցուցահանդէսի կօմիտէտը խնդրեց գեն. նահանգապետին առ ոտս Թագաւոր Կայսրի արկանել ամենահպատակ զգացմունքներ:

ԼՎՕՎ: Ուսուցչական սեմինարիայի աշակերտ ուկրայնցի Շիգալօն գնդակահարեց լեհ պրոֆ. Բառտօվսկիին: Շիգալօյին ձերբակալելիս նրա ընկերները ընդհարվեցին ոստիկանութեան հետ. մի քանի աշակերտ վիրաւորվեցին:

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վաճառվում են
„ԱՐՕՐ“
ամսագրի
1910, 1911 և 1912 թ.թ. լիակատար հաւաքածուները:
Իւրաքանչիւր տարվայ հաւաքածուն առանձին արժէ 3 ռուբլի: Նրանք, որոնք ցանկանում են երեք տարվայ համարները միասին ձեռք բերել, կարող են վճարելով ունենալ «ԱՐՕՐԻ» լիակատար հաւաքածուն: 8 ր.
Հասցէն.—Тифлисъ, редакція газ. «Мшакъ» կամ Tiflis, Rédaction du journal «Mschak». 10—3

Т-во
С. И. Чепелевецкий
съ С-ми
Москва
Духи
Сансай
Новость
(М. 239870)
(յուն. 29)
2—1

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը:

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.: **Փօստատար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.: Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացք** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.:

ԲԱԹՈՒՄ.—**Փօստատար գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.: **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Փօստատար գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.: **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.:

ԲՕՐԺՕՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Փօստատար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Փօստատար գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.: **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.: **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Փօստատար գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.:

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.: **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.:

Կովկ. Հայոց Հրատ. Ընկ.
Լոյս տեսաւ Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆ
«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ»
Հեղինակի պատկերով: Գինն է 50 կօպէկ: Դիմել՝ Тифлисъ. Кавказское Армянское Издательское Общество, Бебутовская ул. № 25, Թիֆլիսի և գաւառական գրախանութներին, Ընկ. ճիւղերին և աշխատակից անդամներին:
ա. օ. 442. 5—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.:
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզանու. հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
ԵՐԵԿՈՅԵՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Օ. Վ. ԳԷԵՎՕԿԵԱՆ-ԷՆԳԷԼ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեանց
I. 0—58

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑԸ
ՄԵԿՆԵՑ ԿԻՍԼՕՎՕԴՍԿ
(Կովկաս. հանք. ջրեր):
Հիւանդների ընդունելութիւնը «ՌՕՍԻԱ» հիւրանոցում:
(օ.մ.) 377. 100—98

ԴՕԿՏՕՐ
Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Շարունակում է ընդունել ամեն տեսակ հիւանդների և խորհրդակցութիւններ է կազմում պրօֆեսօրների հետ: Նոր հասցէն՝ Berlin N. W. Luisenstr. 67. Telephon Amt. Norden. 92—74.
(Ե. ու.) 412. 20—4

ԱԽԱԼԳՕՐ գիւղի (Դուշէթի վիճակ) 90 տուն հայ հասարակութեան համար շտապով հարկաւոր է
ՄԻ ՔԱՀԱՆԱՅ
կամ ՔԱՀԱՆԱՑՈՒ: Պայմանների մասին դիմել՝ гор. Душетъ. Армянск. Благочин. священнику Іусику Априляну.
ու. 432. 2—2

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՈՒՍՈՒՑԻՉ
Հայոց լեզուի և առարկաների համար, որը պէտք է վարէ նաև եկեղեցական խմբապետի պաշտօն: 26—28 դաս, վարձատրութիւնը 600 ռուբլի: Դիմել՝ Петровскъ. (Дагест. обл.) Армянскому церковно-приходскому Попечительству.
448. 4—1

ԿԻՍԼՕՎՕԴՍԿՈՒՄ
պարկի մօտ վարձով տրվում են մօտ 25 կահաւորված սենեակներ 25—75 ռուբլի ամսական, իսկ հոգևորականներին և ուսուցիչներին կանվի ԶԻՋՈՒՄՆ:
Ольховская улица. № 7, дача «МЕТРОПОЛЬ».
440. 2—2

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Ինժեներ Ի. Ս. Պօնդօյեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.: Տէլէֆօն № 10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԵՐԿԱԹ—անկիւնի, կաթսայի, բիֆլէնօյ, տանիքի՝ սև և ցինկով պատած: ԱՍՖԱԼՏ սըզրանեան: ԳՈՒԴՐՕՆ, կրակի դիմացող աղիւս և կաւ: Շինութեան և փուչ ԱՂԻՒՍ, ԿՂՄԻՆՏՐ մարսէյլեան տեսակի և այլ տարբ.: Աղիւսի սեփակ. գործարան Թիֆլիսում: Ամեն տեսակ շինարարական նիւթեղէն. համար տրված պատուէրները կատարվում են շուտափոյթ:
(ու.) 7. 30—23

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՇԱՐԺՈՒՄ“
Նախկին «ՋԱՐԿ» և «ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ» շաբաթաթերթերի փոխարէն Գրական, հասարակական, քաղաքական և գեղարուեստական թերթի, որ լոյս է տեսնելու յունիսի 10-ից, հայ և ռուս լեզուներով:
Բաժանորդագինը Ռուսաստանում տարեկան՝ 6 ր., կէս տարէնը՝ 4 ր.: Արտասահմանում 8 ր., կէս-տարէնը՝ 5 ր.:
«ՇԱՐԺՈՒՄԸ» կը հրատարակվի ազգային առաջադիմական ուղղութեամբ, հետևեալ բաժիններով՝ 1. Խմբագրական, 2. Հրապարախօսական, 3. Քննադատական, 4. Պատմագրական, 5. Գիւղատնտեսական, 6. Մամուլի տեսութիւններ, 7. Թատրոն և գեղարուեստ, 8. Հայ լեզու, հայ ընտանիք, 9. Հայ դպրոց, հայ ուսուցիչ, 10. Գաւառի ձայներ, 11. Վէպ, բանաստեղծութիւն, 12. Ընթացիկ կեանքի երևոյթներից, 13. Հեռագիրներ և լուրեր քաղաքական աշխարհից, 14. Յայտարարութիւններ և պօստ-արկղ:
Թերթի մէջ լոյս են տեսնելու «Գրական դէմքեր» և նշանաւոր մարդկանց կենսագրութիւններ բնորոշ գծերով:
«ՇԱՐԺՈՒՄԻ» խմբագրութիւնը խնդրում է հեղինակներին ուղարկել իրանց աշխատութիւններից, որոնց մասին կը տրվեն պատշաճաւոր քննադատականներ:
Կը յարգվի փոխադարձաբար թերթերի առաքման փոխարինութիւնը և նրանց յայտարարութիւնների ձրի տպագրելու պարտաւորութիւնը:
Հրաւիրված են և դեռ կը հրաւիրվեն «ՇԱՐԺՈՒՄԻՆ» աշխատակցելու համար հայ և օտարազգի աչքի ընկնող գրական ույժեր:
Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆ
Ց. Գ. Մեր հասցէն առ այժմ՝ Эривань. Астафьевская ул. Магазинъ Михаила Антоняна. Переслать Башкентъ, старш. учит. Григорію Баласанянъ.
315. 5—5

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный